

Խորհրդի (ԵՀ) 2000 թվականի մայիսի 29-ի թիվ 1348/2000 կանոնակարգ

Անդամ պետություններում քաղաքացիական և առևտրային գործերով դատական և արտադատական փաստաթղթերի հանձնման մասին

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով Եվրոպական համայնքի հիմնադրման մասին համաձայնագիրը, մասնավորապես՝ դրա հոդվածներ 61«գ»-ն և 67«1»-ը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը¹,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը²,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը³,

Քանի որ.

1) Միությունը նպատակ է հետապնդում պահպանելու և զարգացնելու Միությունը՝ որպես ազատության, անվտանգության և արդարադատության տարածք, որտեղ երաշխավորված է անձի ազատ տեղաշարժը: Նման տարածք ունենալու համար Համայնքը պետք է, մասնավորապես, ընդունի քաղաքացիական գործերով դատական համագործակցության վերաբերյալ ակտեր, որոնք անհրաժեշտ են, որպեսզի ներքին շուկան պատշաճ գործի,

2) ներքին շուկայի պատշաճ գործունեության համար անհրաժեշտ է բարելավել և արագացնել քաղաքացիական և առևտրային գործերով հանձնման ենթակա դատական և արտադատական փաստաթղթերի փոխանցումն անդամ պետությունների միջև,

3) այս բնագավառը ներկայումս Համաձայնագրի 65-րդ հոդվածի գործողության ոլորտում է,

4) Համաձայնագրի 5-րդ հոդվածով նախատեսված լրացուցչության (subsidiarity) և համաչափության սկզբունքների համաձայն՝ սույն Կանոնակարգի նպատակները չեն կարող բավարար չափով իրագործվել անդամ պետությունների կողմից: Ուստի, դրանք ավելի արդյունավետորեն կարող են իրագործվել Համայնքի կողմից: Սույն Կանոնակարգը չի նախատեսում ավելին, քան անհրաժեշտ է՝ նշված նպատակներին հասնելու համար,

5) Խորհուրդը 1997 թվականի մայիսի 26-ի⁴ որոշմամբ մշակել է կոնվենցիա Եվրոպական միության անդամ պետություններում քաղաքացիական կամ առևտրային գործերով դատական և արտադատական փաստաթղթերի հանձնման մասին և առաջարկել է անդամ պետություններին ընդունել այն՝ իրենց համապատասխան սահմանադրական նորմերին համապատասխան: Այդ կոնվենցիան ուժի մեջ չի մտել: Անհրաժեշտ է ապահովել

¹ ՊՏ C 247 E, 31.08.1999 թ., էջ 11:

² 1999 թվականի նոյեմբերի 17-ի եզրակացություն (դեռ չի հրապարակվել պաշտոնական տեղեկագրում):

³ ՊՏ C 368, 20.12.1999 թ., էջ 47:

⁴ ՊՏ C 261, 27.08.1997 թ., էջ 1: Կոնվենցիայի կազմման օրը Խորհուրդն ի գիտություն է ընդունել Կոնվենցիայի բացատրական զեկույցը, որը զետեղված է վերը նշված պաշտոնական տեղեկագրի 26-րդ էջում:

կոնվենցիայի կնքման շուրջ բանակցությունների արդյունքների շարունակականությունը: Սույն Կանոնակարգի բովանդակությունը հիմնականում փոխառված է նշված կոնվենցիայից,

6) քաղաքացիական գործերով դատական ընթացակարգերի արդյունավետությունն ու արագությունը նշանակում են, որ դատական և արտադատական փաստաթղթերի փոխանցումը պետք է կատարվի անդամ պետությունների կողմից այդ նպատակով նշանակված տեղական մարմինների միջև անմիջական հաղորդակցության և արագ միջոցներով: Այնուամենայնիվ, անդամ պետությունները կարող են հայտնել հինգ տարի ժամկետով փոխանցող կամ ստացող միայն մեկ մարմին նշանակելու կամ նշված երկու գործառույթները միաժամանակ կատարող մեկ մարմին նշանակելու իրենց մտադրության մասին: Այդ նշանակումը, սակայն, կարող է յուրաքանչյուր հինգ տարին մեկ երկարաձգվել,

7) փոխանցման արագությունն ապահովելու համար անհրաժեշտ է օգտագործել հնարավոր բոլոր միջոցները՝ պայմանով, որ պահպանվեն ստացվող փաստաթղթի դյուրընթեռնելիության և արժանահավատության հետ կապված որոշ պայմաններ: Փոխանցման անվտանգությունն ապահովելու համար պահանջվում է ուղարկվող փաստաթղթի հետ միասին փոխանցել նախապես տպված ձևաթուղթ, որը պետք է լրացված լինի այն վայրի լեզվով, որտեղ փաստաթուղթը ենթակա է հանձնման կամ տվյալ անդամ պետության համար ընդունելի որևէ այլ լեզվով,

8) սույն Կանոնակարգի արդյունավետությունն ապահովելու նպատակով փաստաթղթի հանձնումը մերժելու հնարավորությունը սահմանափակվում է միայն բացառիկ իրավիճակներով,

9) արագորեն փոխանցելու համար անհրաժեշտ է փաստաթղթերը հանձնել դրանց ստացումից հետո մի քանի օրվա ընթացքում: Այնուամենայնիվ, եթե անցել է մեկ ամիս, սակայն հանձնումը դեռ չի իրականացվել, ապա ստացող մարմինը պետք է այդ մասին ծանուցի փոխանցող մարմնին: Նշված ժամանակահատվածի լրանալը չի նշանակում, որ հարցումը պետք է վերադարձվի փոխանցող մարմնին, եթե պարզ է, որ հանձնումը գործնականում հնարավոր է իրականացնել ողջամիտ ժամկետում,

10) հասցեատիրոջ շահերը պաշտպանելու նպատակով հանձնումը պետք է կատարվի հանձնման վայրի պաշտոնական լեզվով կամ պաշտոնական լեզուներից մեկով, կամ փոխանցող անդամ պետության որևէ այլ լեզվով, որը հասկանում է հասցեատերը,

11) անդամ պետությունների դատավարական նորմերի միջև առկա տարբերությունների պատճառով հանձնման իմաստով էական համարվող ամսաթիվը անդամ պետությունների միջև նույնպես տարբերվում է: Հաշվի առնելով նման իրավիճակները և դժվարություններ առաջանալու հնարավորությունը՝ սույն Կանոնակարգով պետք է նախատեսվի այնպիսի մեխանիզմ, որի պարագայում հանձնման ամսաթիվը որոշվի ստացող անդամ պետության իրավունքի համաձայն: Այնուամենայնիվ, եթե ծագման վայրի անդամ պետությունում ընթացող կամ հարուցվելիք վարույթի շրջանակներում համապատասխան փաստաթղթերը պետք է հանձնվեն սահմանված որոշակի ժամանակահատվածում, ապա հայցվորի նկատմամբ հաշվի առնվող ամսաթիվը պետք է որոշվի ծագման վայրի անդամ պետության իրավունքի հիման վրա: Սակայն, անդամ պետությունն իրավասու է համապատասխան հիմքերի առկայության դեպքում հինգ տարի տևող անցումային ժամանակահատվածի ընթացքում շեղվելու վերը նշված դրույթներից: Նման շեղումն անդամ պետության կողմից կարող է երկարաձգվել հինգ տարին մեկ անգամ՝ ելնելով վերջինիս իրավական համակարգով պայմանավորված պատճառներից,

12) սույն Կանոնակարգը գերակայում է նույն գործողության ոլորտն ունեցող՝ անդամ պետությունների միջև կնքված երկկողմ և բազմակողմ համաձայնագրերի կամ պայմանավորվածությունների դրույթների նկատմամբ, մասնավորապես՝ 1968 թվականի

սեպտեմբերի 27-ի Բրյուսելի կոնվենցիային կից արձանագրության¹ և 1965 թվականի նոյեմբերի 15-ի Հաագայի կոնվենցիայի նկատմամբ՝ դրանց մասնակից անդամ պետությունների միջև հարաբերություններին վերաբերող մասով: Սույն Կանոնակարգը չի արգելում անդամ պետություններին ունենալ կամ կնքել համաձայնագրեր կամ պայմանավորվածություններ, որոնց նպատակն է արագացնել կամ աջակցել փաստաթղթերի փոխանցումը, սակայն պայմանով, որ դրանք համապատասխանեն սույն Կանոնակարգին,

13) սույն Կանոնակարգի համաձայն փոխանցվող տեղեկությունները պետք է հավուր պաշտաճի պաշտպանված լինեն: Այս հարցը գտնվում է «Անհատական տվյալների մշակման շրջանակներում անձանց պաշտպանության և անհատական տվյալների ազատ տեղաշարժի մասին»² Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1995 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 95/46/ԵՀ հրահանգի, ինչպես նաև «Հեռահաղորդակցության ոլորտում անհատական տվյալների մշակման և անձնական կյանքի անձեռնմխելիության պաշտպանության մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1997 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 97/66/ԵՀ հրահանգի գործողության ոլորտում³,

14) սույն Կանոնակարգի կիրարկման համար անհրաժեշտ ակտերը պետք է ընդունվեն Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշման համաձայն, որով սահմանվում է Հանձնաժողովին վերապահված՝ կիրարկող լիազորությունների իրականացման կարգը⁴,

15) նշված ակտերի ընդունումը ներառում է նաև համապատասխան ժամանակակից միջոցների օգտագործմամբ ուղեցույցի մշակումը և թարմացումը,

16) սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից հետո ոչ ուշ, քան երեք տարվա ընթացքում Հանձնաժողովը պետք է ուսումնասիրի դրա կիրառումը և առաջարկի անհրաժեշտ համարվող փոփոխություններ,

17) Միացյալ Թագավորությունը և Իռլանդիան, Եվրոպական միության մասին համաձայնագրին և Եվրոպական համայնքի հիմնադրման մասին համաձայնագրին կից՝ Միացյալ Թագավորության և Իռլանդիայի դիրքորոշման մասին արձանագրության 3-րդ հոդվածի հիման վրա, ծանուցել են սույն Կանոնակարգի ընդունմանը և կիրառմանը մասնակցելու իրենց ցանկության մասին,

18) Դանիան, Եվրոպական միության մասին համաձայնագրին և Եվրոպական համայնքի հիմնադրման մասին համաձայնագրին կից՝ «Դանիայի դիրքորոշման մասին» արձանագրության 1-ին և 2-րդ հոդվածների հիման վրա, չի մասնակցում սույն Կանոնակարգի ընդունմանը, ուստի՝ պարտավորություն չի կրում հետևելու սույն Կանոնակարգի դրույթներին, և վերջիններս չեն կիրառվում Դանիայի նկատմամբ,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

¹ Իրավասության և քաղաքացիական և առևտրային գործերով վճիռների կատարման մասին 1968 թվականի սեպտեմբերի 27-ի Բրյուսելի կոնվենցիա (ՊՏ L 299, 13.12.1972թ., էջ 32, համահավաք տարբերակի համար տե՛ս ՊՏ C 27, 26.01.1998թ., էջ 1):

² ՊՏ L 281, 23.11.1995թ., էջ 31:

³ ՊՏ L 24, 30.1.1998թ., էջ 1:

⁴ ՊՏ L 184, 17.7.1999թ., էջ 23:

ԳԼՈՒԽ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

Գործողության ոլորտը

1. Սույն Կանոնակարգը կիրառվում է քաղաքացիական և առևտրային գործերով, երբ որևէ դատական կամ արտադատական փաստաթուղթ անհրաժեշտ է մեկ անդամ պետությունից փոխանցել մեկ այլ անդամ պետություն՝ վերջինիս տարածքում այդ փաստաթուղթը հանձնելու նպատակով:
2. Սույն Կանոնակարգը չի կիրառվում այն դեպքում, երբ հայտնի չէ այն անձի հասցեն, ում պետք է հանձնվի փաստաթուղթը:

Հոդված 2

Փոխանցող և ստացող մարմինները

1. Յուրաքանչյուր անդամ պետություն նշանակում է պետական պաշտոնյաների, մարմինների կամ այլ անձանց (այսուհետ՝ «փոխանցող մարմիններ»), որոնք լիազորված կլինեն փոխանցել մեկ այլ անդամ պետության տարածքում հանձնման ենթակա դատական կամ արտադատական փաստաթղթեր:
2. Յուրաքանչյուր անդամ պետություն նշանակում է պետական պաշտոնյաների, մարմինների կամ այլ անձանց (այսուհետ՝ «ստացող մարմիններ»), որոնք լիազորված կլինեն մեկ այլ անդամ պետությունից ստանալ դատական կամ արտադատական փաստաթղթեր:
3. Անդամ պետությունը կարող է նշանակել մեկ փոխանցող և մեկ ստացող մարմին կամ նշանակել մեկ մարմին, որը միաժամանակ կկատարի նշված երկու գործառույթները: Դաշնային պետությունները, այն պետությունները, որոնցում գործում են մի քանի իրավական համակարգեր, ինչպես նաև ինքնավար տարածքային միավորներ ունեցող պետություններն իրավասու են նշանակելու մեկից ավելի նման մարմիններ: Նշանակումը գործում է հինգ տարի ժամկետով և կարող է երկարաձգվել հինգ տարին մեկ անգամ:
4. Յուրաքանչյուր անդամ պետություն Հանձնաժողովին տրամադրում է հետևյալ տեղեկությունները.
 - ա) 2-րդ և 3-րդ պարբերություններում նշված՝ ստացող մարմինների անվանումները և հասցեները.
 - բ) դրանց իրավասության ներքո գտնվող աշխարհագրական տարածքները.
 - գ) դրանց տրամադրության տակ առկա՝ փաստաթղթերի ստացման միջոցները, և
 - դ) լեզուները, որոնք կարող են գործածվել հավելվածում զետեղված օրինակելի ձևը լրացնելու համար:

Անդամ պետությունները նշված տեղեկությունների ցանկացած հետագա փոփոխության մասին ծանուցում են Հանձնաժողովին:

Հոդված 3

Կենտրոնական մարմինը

Յուրաքանչյուր անդամ պետություն նշանակում է կենտրոնական մարմին, որը պետք է՝

ա) տեղեկություններ տրամադրի փոխանցող մարմիններին.

բ) հանձնման նպատակով փաստաթղթերի փոխանցման ընթացքում ծագող դժվարությունները հաղթահարելու ուղղությամբ ջանքեր գործադրի.

գ) բացառիկ դեպքերում, փոխանցող մարմնի խնդրանքի հիման վրա, հանձնման վերաբերյալ հարցումը վերահասցեագրել իրավասու ստացող մարմնին:

Դաշնային պետությունները, այն պետությունները, որտեղ գործում են մի քանի իրավական համակարգեր, ինչպես նաև ինքնավար տարածքային միավորներ ունեցող պետություններն իրավասու են նշանակելու մեկից ավելի կենտրոնական մարմիններ:

ԳԼՈՒԽ II

ԴՍՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Բաժին 1

Դատական փաստաթղթերի փոխանցումը և հանձնումը

Հոդված 4

Փաստաթղթերի փոխանցումը

1. Դատական փաստաթղթեր փոխանցումը 2-րդ հոդվածի հիման վրա նշանակված մարմինների միջև իրականացվում է անմիջականորեն և հնարավորինս շուտ:

2. Փաստաթղթերի, հարցումների, հաստատումների, ստացումների, հավաստագրերի և այլ թղթերի փոխանցումը փոխանցող և ստացող մարմինների միջև կարող է իրականացվել ցանկացած հարմար միջոցով՝ պայմանով, որ ստացված փաստաթղթի բովանդակությունը հավաստի է և նույնական է ուղարկված փաստաթղթին, և, որ բոլոր տեղեկությունները դյուրընթեռնելի են:

3. Փոխանցման ենթակա փաստաթղթի հետ մեկտեղ ուղարկվում է հարցում՝ լրացված հավելվածում գետեղված օրինակելի ձևով: Ձևը պետք է լրացվի հասցեատեր անդամ պետության պաշտոնական լեզվով կամ, եթե վերջինս ունի մեկից ավելի պաշտոնական լեզուներ, հանձնման վայրի պաշտոնական լեզվով կամ պաշտոնական լեզուներից որևէ մեկով, կամ ցանկացած այլ լեզվով, որի՝ իր համար ընդունելի լինելու մասին նշել է հասցեատեր անդամ պետությունը: Յուրաքանչյուր անդամ պետություն նշում է Եվրոպական

միության որևէ պաշտոնական լեզու կամ լեզուներ՝ բացառությամբ իր պաշտոնական լեզվի(լեզուների), որը (որոնք) ընդունելի է(են) իր համար՝ ձևաթուղթը լրացնելիս:

4. Փոխանցման ենթակա բոլոր թղթերը և փաստաթղթերը ազատված են օրինականացման պահանջից և պաշտոնական ցանկացած այլ համարժեք ընթացակարգից:

5. Երբ փոխանցող մարմինը ցանկանում է, որպեսզի փաստաթղթի մեկ օրինակը վերադարձվի իրեն 10-րդ հոդվածում նշված հավաստագրի հետ միասին, ապա այն պետք է փաստաթուղթն ուղարկի երկու օրինակից:

Հոդված 5

Փաստաթղթերի թարգմանությունը

1. Ուղարկող մարմինը, որին հայցվորը տրամադրել է փոխանցման ենթակա փաստաթուղթը, հայցվորին տեղեկացնում է, որ հասցեատերը կարող է մերժել փաստաթղթի ընդունումը, եթե վերջինս կազմված չէ 8-րդ հոդվածով նախատեսված լեզուներից որևէ մեկով:

2. Հայցվորը կատարում է թարգմանության հետ կապված բոլոր ծախսերը նախքան փաստաթղթի փոխանցումը՝ անկախ այն հանգամանքից, թե հետագայում ինչպիսի որոշում կարող է կայացնել դատարանը կամ իրավասու մարմինը նշված ծախսերը կատարելու պատասխանատու կողմին որոշելիս:

Հոդված 6

Փաստաթղթերի ստացումը ստացող մարմնի կողմից

1. Փաստաթուղթ ստանալուն պես ստացող մարմինը պետք է հնարավորինս շուտ, սակայն ցանկացած դեպքում ստացումից հետո յոթ օրվա ընթացքում, փոխանցող մարմնին ուղարկի ստացական՝ այդ նպատակով օգտագործելով փոխանցման հնարավոր ամենաարագ միջոցը և հավելվածում գետեղված օրինակելի ձևը:

2. Եթե փաստաթղթերի հանձնման վերաբերյալ հարցումը չի կարող կատարվել փոխանցված տեղեկությունների կամ փաստաթղթերի հիման վրա, ստացող մարմինը պետք է հնարավոր ամենաարագ միջոցով կապ հաստատի փոխանցող մարմնի հետ՝ ապահովելու բացակայող տեղեկությունների կամ փաստաթղթերի ստացումը:

3. Եթե փաստաթղթերի հանձնման վերաբերյալ հարցումն ակնհայտորեն դուրս է սույն Կանոնակարգի գործողության ոլորտից կամ, եթե հանձնումն անհնար է դառնում ձևական պահանջները չպահպանելու հետևանքով, ապա փոխանցված հարցումը և փաստաթղթերը, ստանալուն պես, պետք է վերադարձվեն փոխանցող մարմնին՝ հավելվածում գետեղված վերադարձնելու վերաբերյալ օրինակելի ձևի ծանուցման հետ մեկտեղ:

4. Ստացող մարմինը, որն ստացել է հանձնման ենթակա փաստաթուղթը, սակայն չունի այն հանձնելու համար անհրաժեշտ տարածքային ընդդատություն, եթե դիմումը բավարարում է հոդված 4«3»-ով նախատեսված պայմաններին, ստացված փաստաթուղթը և հարցումը փոխանցում է այն ստացող մարմնին, որը նույն անդամ պետության տարածքում ունի պահանջվող տարածքային ընդդատություն, ինչպես նաև այդ մասին տեղեկացնում է

փոխանցող մարմինն՝ այդ նպատակով օգտագործելով հավելվածում զետեղված օրինակելի ձևաթուղթը: Այդ ստացող մարմինը փաստաթղթի ստացման մասին տեղեկացնում է փոխանցող մարմնին սույն հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված կարգով:

Հոդված 7

Փաստաթղթերի հանձնումը

1. Ստացող մարմինը ինքն է հանձնում փաստաթուղթը կամ ապահովում դրա հանձնումը հասցեատեր անդամ պետության իրավունքին համապատասխան, կամ փոխանցող մարմնի պահանջած որոշակի կոնկրետ ձևով՝ բացառությամբ, երբ վերջինիս պահանջած կոնկրետ ձևը հակասում է հասցեատեր անդամ պետության իրավունքին:
2. Փաստաթղթի հանձնման համար անհրաժեշտ բոլոր քայլերը պետք է կատարվեն հնարավորինս շուտ: Ցանկացած պարագայում, եթե ստացումից հետո մեկ ամսվա ընթացքում հնարավոր չէ իրականացնել հանձնումը, ապա ստացող մարմինը պետք է այդ մասին տեղեկացնի փոխանցող մարմնին՝ օգտագործելով հավելվածում զետեղված օրինակելի ձևի հավաստագիրը, որը պետք է կազմվի հոդված 10«2»-ում նշված պայմանների պահպանմամբ: Նշված ժամանակահատվածը հաշվարկվում է հասցեատեր անդամ պետության իրավունքի համաձայն:

Հոդված 8

Փաստաթղթի ընդունումը մերժելը

1. Ստացող մարմինը հասցեատիրոջը տեղեկացնում է այն մասին, որ վերջինս իրավասու է մերժելու հանձնման ենթակա փաստաթղթի ընդունումը, եթե փաստաթուղթը կազմված չէ հետևյալ լեզուներից որևէ մեկով՝
 - ա) հասցեատեր անդամ պետության պաշտոնական լեզվով կամ, եթե վերջինիս տարածքում կան մեկից ավելի պաշտոնական լեզուներ, հանձնման վայրի պաշտոնական լեզվով կամ պաշտոնական լեզուներից որևէ մեկով, կամ
 - բ) փոխանցող անդամ պետության լեզվով, որը հասկանում է հասցեատերը:
2. Եթե ստացող մարմինը տեղեկացվում է, որ հասցեատերը հրաժարվում է ընդունել փաստաթուղթը վերը նշված 1-ին պարբերության հիման վրա, ապա ստացող մարմինը այդ մասին անհապաղ տեղեկացնում է փոխանցող մարմնին՝ օգտագործելով 10-րդ հոդվածով նախատեսված հավաստագիրը, և վերադարձնում է դիմումը և այն փաստաթուղթը, որի թարգմանությունը պահանջվել է:

Հոդված 9

Հանձնման ամսաթիվը

1. Չսահմանափակելով 8-րդ հոդվածի գործողությունը՝ 7-րդ հոդվածի համաձայն փաստաթղթի հանձնման ամսաթիվ է համարվում այն ամսաթիվը, երբ, հասցեատեր անդամ պետության իրավունքին համապատասխան, հանձնվում է փաստաթուղթը:

2. Այնուամենայնիվ, եթե փաստաթուղթը ծագման անդամ պետության տարածքում հարուցվելիք կամ ընթացող վարույթի շրջանակներում ենթակա է հանձնման կոնկրետ որոշակի ժամանակահատվածի ընթացքում, ապա հայցվորի նկատմամբ հաշվի առնվող ամսաթիվը ծագման անդամ պետության իրավունքով ամրագրված համապատասխան ամսաթիվն է:

3. Անդամ պետությունն իրավասու է հինգ տարի տևող անցումային ժամանակահատվածի ընթացքում, համապատասխան պատճառների հիման վրա, շեղվելու վերը նշված 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթներից:

Նման անցումային ժամանակահատվածը անդամ պետության կողմից կարող է երկարաձգվել հինգ տարին մեկ անգամ՝ ելնելով վերջինիս իրավական համակարգով պայմանավորված պատճառներից: Տվյալ անդամ պետությունը պարտավոր է նման շեղման բովանդակության և գործի հանգամանքների մասին տեղեկացնել Հանձնաժողովին:

Հոդված 10

Հանձնման մասին հավաստագիրը և հանձնված փաստաթղթի պատճենը

1. Երբ փաստաթղթի հանձնման հետ կապված ընթացակարգերն ավարտվել են, դրանց ավարտման մասին հավաստագիր է կազմվում հավելվածում զետեղված օրինակելի ձևով, որը հասցեագրվում է փոխանցող մարմնին, ընդ որում, այն դեպքում, երբ կիրառելի է հոդված 4«5»-ը, դրան կցվում է նաև հանձնված փաստաթղթի պատճենը:

2. Հավաստագիրը լրացվում է ծագման անդամ պետության պաշտոնական լեզվով կամ պաշտոնական լեզուներից որևէ մեկով, կամ որևէ այլ լեզվով, որի՝ իր համար ընդունելի լինելու մասին նշել է ծագման անդամ պետությունը: Յուրաքանչյուր անդամ պետություն պետք է նշի Եվրոպական միության որևէ պաշտոնական լեզու կամ լեզուներ, բացառությամբ իր պաշտոնական լեզուների, որն(որոնք) ընդունելի է(են) իր համար՝ ձևը լրացնելիս:

Հոդված 11

Հանձնման ծախսերը

1. Որևէ անդամ պետությունից ստացվող դատական փաստաթղթերի հանձնումը չի առաջացնում հասցեատեր անդամ պետության տարածքում մատուցված ծառայությունների հետ կապված հարկերի կամ ծախսերի վճարման կամ փոխհատուցման անհրաժեշտություն:

2. Հայցվորը պարտավոր է վճարել կամ փոխհատուցել այն ծախսերը, որոնք պայմանավորված են.

ա) հասցեատեր անդամ պետության իրավունքի համաձայն դատական պաշտոնյայի կամ այլ իրավասու անձի աշխատանքով.

բ) հանձնման որևէ կոնկրետ եղանակի կիրառմամբ:

Բաժին 2

Դատական փաստաթղթերի փոխանցման և հանձնման մյուս եղանակները

Հոդված 12

Փոխանցումը հյուպատոսական կամ դիվանագիտական ուղիներով

Բացառիկ հանգամանքներում յուրաքանչյուր անդամ պետություն կարող է, հանձնման ենթակա դատական փաստաթղթերը մեկ այլ անդամ պետության՝ 2-րդ կամ 3-րդ հոդվածի համաձայն նշանակված մարմիններին ուղարկելու նպատակով, օգտվել հյուպատոսական կամ դիվանագիտական ուղիներից:

Հոդված 13

Հանձնումը դիվանագիտական կամ հյուպատոսական ծառայողների կողմից

1. Յուրաքանչյուր անդամ պետություն իրավասու է մեկ այլ անդամ պետությունում բնակվող անձանց դատական փաստաթղթերի հանձնումը կատարելու, առանց որևէ հարկադրանքի կիրառման, անմիջականորեն իր դիվանագիտական կամ հյուպատոսական ծառայողների միջոցով:
2. Ցանկացած անդամ պետություն կարող է հոդված 23«1»-ի համաձայն հայտարարել, որ ինքը դեմ է իր տարածքում նման հանձնում իրականացնելուն՝ բացառությամբ, երբ փաստաթղթերը ենթակա են հանձնման այն անդամ պետության քաղաքացիներին, որտեղ կազմվել են փաստաթղթերը:

Հոդված 14

Հանձնումը փոստով

1. Յուրաքանչյուր անդամ պետություն իրավասու է դատական փաստաթղթերի հանձնումը կատարելու անմիջականորեն փոստի միջոցով՝ մեկ այլ անդամ պետության տարածքում բնակվող անձանց:
2. Ցանկացած անդամ պետություն կարող է, հոդված 23«1»-ի համաձայն, նշել այն պայմանները, որոնց բավարարման դեպքում ինքը կընդունի դատական փաստաթղթերի հանձնումը փոստի միջոցով:

Հոդված 15

Անմիջական հանձնումը

1. Սույն Կանոնակարգը չի սահմանափակում դատական վարույթով շահագրգռված ցանկացած անձի ազատությունը՝ դատական փաստաթղթերի հանձնումն իրականացնելու անմիջականորեն հասցեատեր անդամ պետության դատական պաշտոնյաների, պաշտոնատար անձանց կամ այլ իրավասու անձանց միջոցով:
2. Ցանկացած անդամ պետություն իրավասու է հոդված 23«1»-ի համաձայն հայտարարելու, որ ինքը դեմ է իր տարածքում դատական փաստաթղթերի՝ սույն հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված կարգով հանձնմանը:

ԳԼՈՒԽ III

ԱՐՏԱԴԱՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Հոդված 16

Փոխանցումը

Արտադատական փաստաթղթերը կարող են մեկ այլ անդամ պետության տարածքում հանձնման համար փոխանցվել սույն Կանոնակարգի դրույթներին համապատասխան:

ԳԼՈՒԽ IV

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 17

Կիրարկման կանոնները

Սույն Կանոնակարգի կիրարկման համար անհրաժեշտ ակտերը՝ կապված ստորև նշված հարցերի հետ, պետք է իրականացվեն հոդված 18«2»-ում նշված խորհրդակցական ընթացակարգին համապատասխան՝

ա) հոդված 2«4»-ի համաձայն անդամ պետությունների տրամադրած տեղեկությունները պարունակող ուղեցույցի կազմում և ամենամյա թարմացում.

բ) սույն Կանոնակարգի համաձայն հանձնման ենթակա փաստաթղթերի հիման վրա բառարանի կազմում Եվրոպական միության պաշտոնական լեզուներով.

գ) հավելվածում գետեղված օրինակելի ձևի թարմացում կամ դրանում տեխնիկական փոփոխությունների կատարում:

Հողված 18

Կոմիտեն

1. Հանձնաժողովին աջակցելու է Կոմիտեն:
2. Այն դեպքում, երբ հղում է արվում սույն պարբերությանը, կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 3-րդ և 7-րդ հոդվածները:
3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

Հողված 19

Պատասխանող կողմի չներկայանալը

1. Երբ սույն Կանոնակարգի համաձայն հանձնման նպատակով մեկ այլ անդամ պետության պետք էր փոխանցել դատական ծանուցագիր կամ համարժեք փաստաթուղթ և, եթե պատասխանող կողմը չի ներկայացել, ապա վճիռը չի կարող կայացվել այնքան ժամանակ, քանի դեռ չի հաստատվել, որ`

ա) փաստաթուղթը հանձնվել է այնպիսի եղանակով, որը նախատեսված է հասցեատեր անդամ պետության ներպետական իրավունքով` ներպետական վարույթների շրջանակում պետության տարածքում գտնվող անձանց փաստաթղթերի հանձնման վերաբերյալ դրույթներին համապատասխան, կամ

բ) փաստաթուղթը սույն Կանոնակարգով նախատեսված որևէ այլ եղանակով փաստացի առաքվել է պատասխանողին կամ նրա բնակության վայրի հասցեով.

և որ նշված դեպքերից որևէ մեկի պարագայում հանձնումը կամ առաքումը կատարվել է այնպես, որ պատասխանող կողմն ունեցել է բավարար ժամանակ իր պաշտպանությունը կազմակերպելու համար:

2. Յուրաքանչյուր անդամ պետություն ազատ է համաձայն հողված 23«1»-ի հայտարարելու, որ դատավորը, անկախ սույն հողվածի 1-ին պարբերության դրույթներից, իրավասու է վճիռ կայացնելու, նույնիսկ եթե հանձնման կամ առաքման մասին հավաստագիր չի ստացվել, եթե բավարարված են հետևյալ բոլոր պայմանները`

ա) փաստաթուղթը փոխանցվել է սույն Կանոնակարգով նախատեսված ձևերից որևէ մեկով.

բ) փաստաթղթի փոխանցման ամսաթվից ի վեր անցել է առնվազն վեց ամիս, որը տվյալ գործը քննող դատավորի կողմից բավարար է համարվում.

գ) որևէ տեսակի հավաստագիր չի ստացվել, չնայած որ ողջամիտ բոլոր ջանքերը գործադրվել են` հասցեատեր անդամ պետության իրավասու մարմինների միջոցով նման հավաստագիր ստանալու ուղղությամբ:

3. Անկախ սույն հողվածի 1-ին և 2-րդ պարբերություններից, դատավորն իրավասու է, հրատապության դեպքում, ձեռնարկելու հայցի ապահովման ցանկացած միջոց:

4. Երբ սույն Կանոնակարգի համաձայն, հանձնման նպատակով մեկ այլ անդամ պետության անհրաժեշտ է եղել ուղարկել դատական ծանուցագիր կամ համարժեք փաստաթուղթ, և, եթե

դատարան չներկայացած պատասխանողի դեմ վճիռ է կայացվել, ապա դատավորն իրավասու է պատասխանողի նկատմամբ չտարածելու տվյալ վճռի բողոքարկման ժամկետը լրանալու հետևանքները, եթե բավարարված են հետևյալ պայմանները՝

ա) պատասխանող կողմը, ոչ իր մեղքով, փաստաթղթի մասին չի իմացել բավարար ժամանակ առաջ, որպեսզի կարողանա կազմակերպել իր պաշտպանությունը, կամ բավարար ժամանակ առաջ չի իմացել վճռի մասին, որպեսզի կարողանա բողոքարկել այն, և

բ) պատասխանող կողմը բացահայտել է հայցի էության դեմ պաշտպանության առերևույթ (*prima facie defence*) փաստարկներ:

Վերը նշված հետևանքները չտարածելու մասին միջնորդությունը կարող է ներկայացվել միայն վճռի մասին պատասխանող կողմի իմանալուց հետո ողջամիտ ժամկետի ընթացքում:

Յուրաքանչյուր անդամ պետություն իրավասու է հողված 23«1»-ի համաձայն հայտարարելու, որ նշված միջնորդությունը քննության չի առնվի, եթե այն ներկայացվել է այդպիսի հայտարարության մեջ տվյալ պետության կողմից սահմանված որոշակի ժամկետ լրանալուց հետո, սակայն այդ ժամկետը ցանկացած դեպքում վճռի կայացման ամսաթվից հետո մեկ տարուց պակաս չի կարող լինել:

5. Սույն հոդվածի 4-րդ պարբերությունը չի տարածվում անձանց կարգավիճակի կամ գործունակության վերաբերյալ վճիռներին:

Հոդված 20

Առնչությունը անդամ պետությունների մասնակցությամբ համաձայնագրերի կամ պայմանավորվածությունների հետ

1. Սույն Կանոնակարգը գերակայում է սույն հարցերի վերաբերյալ անդամ պետությունների միջև կնքված երկկողմ և բազմակողմ համաձայնագրերի կամ պայմանավորվածությունների այլ դրույթների նկատմամբ, մասնավորապես 1968 թվականի սեպտեմբերի 27-ի Բրյուսելի կոնվենցիային կից արձանագրության IV հոդվածի և 1965 թվականի նոյեմբերի 15-ի Հաագայի կոնվենցիայի նկատմամբ:

2. Սույն Կանոնակարգը չի արգելում անդամ պետություններին ունենալ կամ կնքել համաձայնագրեր կամ պայմանավորվածություններ, որոնց նպատակն է էլ ավելի արագացնել կամ հեշտացնել փաստաթղթերի փոխանցումը՝ պայմանով, որ դրանք պետք է համապատասխանեն սույն Կանոնակարգին:

3. Անդամ պետությունները պետք է Հանձնաժողովին ուղարկեն՝

ա) սույն հոդվածի 2-րդ պարբերության մեջ նշված՝ անդամ պետությունների միջև կնքված համաձայնագրերի կամ պայմանավորվածությունների պատճենները, ինչպես նաև այն համաձայնագրերի կամ պայմանավորվածությունների նախագծերը, որոնք իրենք մտադիր են ընդունել,

և

բ) նշված համաձայնագրերում կամ պայմանավորվածություններում կատարվող ցանկացած փոփոխություն կամ ցանկացած չեղյալ հայտարարում:

Հոդված 21

Իրավաբանական օգնությունը

Սույն Կանոնակարգը չի ազդում «Քաղաքացիական դատավարության մասին» 1905 թվականի հուլիսի 17-ի կոնվենցիայի 23-րդ հոդվածի, «Քաղաքացիական դատավարության մասին» 1954 թվականի մարտի 1-ի կոնվենցիայի 24-րդ հոդվածի և «Արդարադատության միջազգային մատչելիության մասին» 1980 թվականի հոկտեմբերի 25-ի կոնվենցիայի 13-րդ հոդվածի՝ այդ կոնվենցիաների մասնակից անդամ պետությունների նկատմամբ կիրառելիության վրա:

Հոդված 22

Փոխանցված տեղեկությունների պաշտպանությունը

1. Տեղեկությունները, այդ թվում, մասնավորապես, անհատական տվյալները, որոնք փոխանցվել են սույն Կանոնակարգի հիման վրա, ստացող մարմնի կողմից պետք է օգտագործվեն միայն այն նպատակով, որի համար դրանք փոխանցվել են:
2. Ստացող մարմինները պետք է, իրենց ներպետական իրավունքի համաձայն, ապահովեն այդ տեղեկությունների գաղտնիությունը:
3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունները չեն ազդում ներպետական այն օրենքների վրա, որոնք տվյալների սուրյեկտներին իրավունք են վերապահում տեղեկանալու սույն Կանոնակարգի համաձայն փոխանցված տեղեկությունների օգտագործման մասին:
4. Սույն Կանոնակարգը չի սահմանափակում 95/46/ԵՀ և 97/66/ԵՀ հրահանգների դրույթների գործողությունը:

Հոդված 23

Հայտնելը և հրապարակայնությունը

1. Անդամ պետությունները պետք է Հանձնաժողովին հայտնեն սույն Կանոնակարգի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 9-րդ, 10-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 17«ա» և 19-րդ հոդվածներում նշված տեղեկությունները:
2. Հանձնաժողովը պետք է Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակի սույն հոդվածի 1-ին պարբերությունում նշված տեղեկությունները:

Հոդված 24

Վերանայումը

2004 թվականի հունիսի 1-ից ոչ ուշ, իսկ դրանից հետո՝ հինգ տարին մեկ անգամ, Հանձնաժողովը պետք է Եվրոպական պառլամենտին, Խորհրդին ու Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեին ներկայացնի սույն Կանոնակարգի կիրառման մասին զեկույց՝ հատուկ ուշադրություն դարձնելով 2-րդ հոդվածի համաձայն նշանակված մարմինների արդյունավետությանը և 3-րդ հոդվածի «գ» կետի և 9-րդ հոդվածի գործնական կիրառությանը: Անհրաժեշտության դեպքում զեկույցին կից պետք է ներկայացվեն սույն Կանոնակարգում փոփոխություններ կատարելու մասին առաջարկություններ՝ ծանուցման համակարգերի զարգացմանը համապատասխան:

Հոդված 25

Ուժի մեջ մտնելը

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում 2001 թվականի մայիսի 31-ից:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է և անդամ պետություններում գործում է անմիջականորեն՝ Եվրոպական համայնքի հիմնադրման մասին համաձայնագրին համապատասխան:

Կատարված է Բրյուսելում, 2000 թվականի մայիսի 29-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ

Ա. Կոստա

ՀԱՎԵԼՎԱԾ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՀԱՐՑՈՒՄ

(Անդամ պետություններում քաղաքացիական և առևտրային գործերով դատական և արտադատական փաստաթղթերի հանձնման մասին Խորհրդի (ԵՀ) 2000 թվականի մայիսի 29-ի թիվ 1348/2000 կանոնակարգի հոդված 4«3»)¹

Գործի համարը

1. ՓՈԽԱՆՑՈՂ ՄԱՐՄԻՆ

Ինքնությունը

Հասցեն

Փողոցը և փոստարկղի համարը

Գտնվելու վայրը և կողը

Երկիրը

Հեռ.

Ֆաքսը(*)

Էլեկտրոնային հասցեն

2. ՄՏԱՑՈՂ ՄԱՐՄԻՆ

Ինքնությունը

Հասցեն

Փողոցը և փոստարկղի համարը

Գտնվելու վայրը և կողը

Երկիրը

Հեռ.

Ֆաքսը(*)

Էլեկտրոնային հասցեն(*)

3. ԴԻՄՈՂ

Ինքնությունը

Հասցեն

Փողոցը և փոստարկղի համարը

Գտնվելու վայրը և կողը

Երկիրը

¹ ՊՏ L 160, 30.06.2000թ., էջ. 37:

(*) Այս կետը կամընտիր է:

Հեռ.

Ֆաքսը(*)

Էլեկտրոնային հասցեն

4. ՀԱՍՑԵԱՏԵՐ

Ինքնությունը

Հասցեն

Փողոցը և փոստարկղի համարը

Գտնվելու վայրը և կողը

Երկիրը

Հեռ. (*)

Ֆաքսը(*)

Էլեկտրոնային հասցեն(*)

Նույնականացման համարը(սոցիալական ապահովության համարը, կազմակերպության համարը կամ որևէ համարժեք)(*)

5. ՀԱՆՁՆՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Հասցեատեր անդամ պետության իրավունքին համապատասխան

Հետևյալ հատուկ եղանակով

Եթե այս եղանակը չի համապատասխանում հասցեատեր անդամ պետության իրավունքին, ապա փաստաթուղթը (փաստաթղթերը) պետք է հանձնվի (հանձնվեն) իրավունքին համապատասխան

այո

ոչ

6. ՀԱՆՁՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

ա) 6.1. Փաստաթղթի բնույթը

6.1.1. դատական

6.1.1.1. դատական ծանուցագիր

6.1.1.2. վճիռ

6.1.1.3. բողոք

6.1.1.4. այլ

* Այս կետը կամընտիր է:

6.1.2. արտադատական

բ) 6.2. Փաստաթղթում նշված ամսաթիվը կամ առավելագույն ժամկետը(*)

գ) 6.3. Փաստաթղթի լեզուն.

6.3.1. բնօրինակը՝ գերմաներեն, անգլերեն, դանիերեն, հունարեն, ֆիններեն, ֆրանսերեն, իսպաներեն, իտալերեն, հոլանդերեն, պորտուգալերեն, շվեդերեն և այլն.

6.3.2. թարգմանությունը(*)՝ գերմաներեն, անգլերեն, դանիերեն, իսպաներեն, ֆիններեն, ֆրանսերեն, հունարեն, իտալերեն, հոլանդերեն, պորտուգալերեն, շվեդերեն և այլն.

6.4. Ներդիրների թիվը

7. ՀԱՆՁՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՊԱՏՃԵՆԸ

7.1. Այո (այդ դեպքում ուղարկեք հանձնման ենթակա փաստաթղթի երկու օրինակ)

7.2. Ոչ

1. Կանոնակարգի հոդված 7«2»-ով պահանջվում է ձեռնարկել անհրաժեշտ բոլոր քայլերը փաստաթղթի հնարավորինս արագ հանձնման համար: Ցանկացած դեպքում, եթե հնարավոր չէ իրականացնել հանձնումը փաստաթուղթն ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում, անհրաժեշտ է տեղեկացնել այդ մամնին 13-րդ կետով սահմանված հավաստագրի միջոցով:

2. Եթե հնարավոր չէ կատարել հանձնման վերաբերյալ հարցումը փոխանցված տեղեկությունների կամ փաստաթղթերի հիման վրա, սույն Կանոնակարգի հոդված 6«2»-ի համաձայն դուք պետք է կապ հաստատեք այդ մարմնի հետ հնարավոր ամենաարագ միջոցներով՝ ապահովելու բացակայող տեղեկությունների կամ փաստաթղթերի ստացումը:

Կատարված է.....

Ամսաթիվը.....

Ստորագրությունը և(կամ) կնիքը

* Այս կետը կամընտիր է:

Ստացող մարմնի գործի համարը

ՄՏԱՑՄԱՆ ՀԱՄԱՏՈՒՄԸ

(Խորհրդի (ԵՀ) թիվ 1348/2000 կանոնակարգի հոդված 6«1»)

Հաստատումը պետք է ուղարկվի փոխանցման հնարավոր ամենաարագ եղանակով՝ փաստաթուղթն ստանալուց հետո որքան հնարավոր է շուտ, սակայն, ցանկացած դեպքում, ստացումից հետո յոթ օրվա ընթացքում:

8. ՄՏԱՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ

Կատարված է

Ամսաթիվը.....

Ստորագրությունը և(կամ) կնիքը

ՀԱՐՑՈՒՄԸ ԵՎ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ
ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

(Խորհրդի (ԵՀ) թիվ 1348/2000 կանոնակարգի հոդված 6«3»)

Հարցումը և փաստաթուղթը, ստացվելուն պես, պետք է վերադարձվեն:

9. ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՊԱՏՃԱՌԸ

9.1. Հարցումն ակնհայտորեն դուրս է Կանոնակարգի գործողության ոլորտից.

9.1.1. փաստաթուղթը քաղաքացիական կամ առևտրային բնույթի չէ

9.1.2. հանձնումը չի իրականացվում մեկ անդամ պետությունից մյուս անդամ պետություն

9.2. Ձևական պահանջների չկատարումը անհնարին է դարձնում հանձնումը

9.2.1. փաստաթուղթը դյուրընթեռնելի չէ

9.2.2. ձևաթուղթը չի լրացվել համապատասխան լեզվով

9.2.3. ստացված փաստաթուղթը ճշգրիտ և նույնական պատճենը չէ

9.2.4. այլ (խնդրում ենք մանրամասնել)

9.3. Հանձնման եղանակը չի համապատասխանում անդամ պետության իրավունքին
(Կանոնակարգի հոդված 7«1»)

Կատարված է

Ամսաթիվը.....

Ստորագրությունը և(կամ) կնիքը

Համապատասխան ստացող մարմնի գործի համարը

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՍՏԱՑՈՂ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՐՑՄԱՆ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՎԵՐՍՏԻՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

(Խորհրդի (ԵՀ) թիվ 1348/2000 կանոնակարգի հոդված 6«4»)

Հարցումն ու փաստաթուղթը ներկայացվել են այն ստացող մարմնին, որը հանձնման համար տարածքային ընդդատություն ունի

10.1. Ինքնությունը

10.2. Հասցեն

10.2.1. Փողոցը և փոստարկղի համարը

10.2.2. Գտնվելու վայրը և կողը

10.2.3. Երկիրը

10.3. Հեռ.

10.4. Ֆաքս(*)

10.5. Էլեկտրոնային հասցեն(*)

Կատարված է

Ամսաթիվը.....

Ստորագրությունը և (կամ) կնիքը

* Այս կետը կամընտիր է:

**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆ ՍՏԱՑՈՂ
ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՍՏԱՑՄԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՓՈԽԱՆՑՈՂ ՄԱՐՄՆԻՆ**

(Խորհրդի (ԵՀ) թիվ 1348/2000 կանոնակարգի հոդված 6«4»)

Ծանուցումը պետք է ուղարկվի փոխանցման հնարավոր ամենաարագ եղանակով՝ փաստաթուղթն ստանալուց հետո հնարավորինս շուտ, սակայն ցանկացած հարցում ստանալուց հետո յոթ օրվա ընթացքում:

11. ՍՏԱՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ

Կատարված է.....

Ամսաթիվը.....

Ստորագրությունը և(կամ) կնիքը

ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԿԱՄ ՉՀԱՆՁՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ
(Խորհրդի (ԵՀ) թիվ 1348/2000 կանոնակարգի 10-րդ հոդված)

Հանձնումը պետք է իրականացվի հնարավորինս շուտ: Ամեն դեպքում, եթե հնարավոր չի եղել հանձնումն իրականացնել ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում, ստացող մարմինը պետք է տեղեկացնի փոխանցող մարմնին (համաձայն Կանոնակարգի հոդված 7«2»-ի)

12. ՀԱՆՁՆՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ

ա) 12.1. Հանձնման ամսաթիվը և հասցեն

բ) 12.2. Փաստաթուղթը

Ա) 12.2.1 հանձնվել է հասցեատեր անդամ պետության իրավունքին համապատասխան, այսինքն՝

12.2.1.1. փոխանցվել է

12.2.1.1.1. հասցեատիրոջն անձամբ

12.2.1.1.2. այլ անձի

12.2.1.1.2.1. Անունը

12.2.1.1.2.2. Հասցեն

12.2.1.1.2.2.1. Փողոցը և փոստարկղի համարը

12.2.1.1.2.2.2. Գտնվելու վայրը և կողը

12.2.1.1.2.2.3. Երկիրը

12.2.1.1.2.3. Հասցեատիրոջ հետ կապը

ազգակցական

աշխատանքային

այլ

12.2.1.1.3. հասցեատիրոջ հասցեն

12.2.1.2. հանձնումը փոստով

12.2.1.2.1 առանց ստացման հաստատման

12.2.1.2.2 ստացման կից հաստատմամբ

12.2.1.2.2.1. հասցեատիրոջ կողմից

12.2.1.2.2.2. այլ անձի կողմից

12.2.1.2.2.2.1. Անունը

12.2.1.2.2.2.2. Հասցեն

12.2.1.2.2.2.2.1. Փողոցը և փոստարկղի համարը

12.2.1.2.2.2.2.2. Գտնվելու վայրը և կողը

12.2.1.2.2.2.2.3. Երկիրը

12.2.1.2.2.2.3. Հասցեատիրոջ հետ կապը

12.2.1.3. այլ եղանակով (խնդրում ենք նշել՝ ինչպես)

Բ) 12.2.2. հանձնվել է հետևյալ հատուկ եղանակով (խնդրում ենք նշել՝ ինչպես)

գ) 12.3. Փաստաթղթի հասցեատերը տեղեկացվել է (բանավոր)(գրավոր), որ նա կարող է հրաժարվել ընդունելու այդ փաստաթուղթը, եթե այն հանձնման վայրի կամ փոխանցման պետության պաշտոնական լեզվով չէ, որը նա հասկանում է:

13. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ՀՈԴՎԱԾ 7(2)-ի

Հնարավոր չի եղել հանձնումը իրականացնել ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում:

14. ՓԱՍՏԱԹՂԹԻ ՄԵՐԺՈՒՄԸ

Հասցեատերը հրաժարվում է ընդունել փաստաթուղթը համապատասխան լեզվով լրացված չլինելու պատճառով:

15. ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ՉՀԱՆՁՆԵԼՈՒ ՊԱՏՃԱՌԸ

15.1. Հասցեն հայտնի չէ

15.2. Հասցեատիրոջ գտնվելու վայրը հայտնի չէ

15.3. Փաստաթուղթը չի կարող հանձնվել մինչև կետ 6.2-ում նշված ամսաթիվը կամ առավելագույն ժամկետը

15.4. Այլ (խնդրում ենք նշել)

Փաստաթղթերը կցված են սույն հավաստագրին:

Կատարված է

Ամսաթիվը.....

Ստորագրությունը և(կամ) կնիքը